որ է ի Վէնէտիկ. գեղեցիկ և վայելուչ և պայծառ։ Ունի զխորան մի փառաւոր, և զվերնատուն հանդերձ երգեհոնիւ, և զարդարեալ պատկերօք։ Հոգան զամենայն պէտս ծառայութեան նորա սպասաւորք եկեղեցւոյն սրբոյն ստեփաննոսի։ Եւ սկսայ զառաջին պաշտօն և զպատարագ մատուցանել ի նմա յաւագ հինգշաբաթի աւուր. իսկ զերկրորդն այսօր մատուցի թիւ, զի չունիմք այժմ զզգեստս ըստ հայոց վասն ձայնաւոր պատարագի։ Եւ ի վաղիւն տեառն օգնականութեամբ ասեմք զժամ զառաւօտեան, յետոյ զքարոզ, և ապա զթիւ պատարագս։ Ժամասաց եմք չորս քահանայք, ես, կարապետ եպիսկոպոսն, Յովհաննէս վարդապետն և տէր մանուէլն։ Եւ երկու դպիրք են տիրացու Պօղոսն և եղբայր թովմասն։ Իսկ ժողովուրդք են թուով իբրև քառասուն։ Այժմ յոյժ ուրախ է ժողովուրդն և մխիթարեալ։ Տէր հաստատուն պահեսցէ և միաբան...։ Ցանձն առնելով զիս և զժողովուրդս զայս ի սուրբ աղօթս ձեր և ամենայն միաբանից... ողջոյն տամ մինասայ արհիեպիսկոպոսին...։

Այս ԻԳ գիր է, զոր գրեմ ի վանս

Նուաստ ծառայ
Հայր Իգնատիոս վարդապետ Խաչատուրեան
ի կարգէ սուրբ հօրն Անտոնի աբբայի

Յամի տեառն 1752
Ապրիլի 1
[Վիեննա]

ՃԾԹ.

Ակնեցի Եաղուպ աղա, որ կը յիշատակուի մեր հետևեալ վաւերաթուղթին մէջ, ազգային պատմութեան մէջ ուշագրաւ տեղ մը կը գրաւէ՝ Կ. Պոլսոյ միջազգային մարմիններու առջև վայելած դիրքով և Հայ Պատրիարգական աթոռին շուրջ իր ստանձնած դերով։ Ժամանակակից ազգայնոց մէջ ստուգիւ ճանչցուած է ան իբրև ազդեցիկ դէմք մը, «որոյ հաւասար չէր ոք լեալ ի հայոց մինչև ցայնժամ», կ՚ըսէ Զամչեան[1]։

Յակոբ Նալեանի Կ. Պոլսոյ պատրիարգական գահը վերստին բարձրանալուն պատճառը Եաղուպ եղած է, որովհետև երբ սա Երուսաղէմ ուխտի կ՚երթայ՝ հոն Նալեան—նոյն ատեն Պատրիարք Երուսաղեմի—«սիրելի եցոյց նմա զինքն, և բազում «ինչ խօսեցեալ ընդ նմա՝ աղաչեաց զնա դարձուցանել զինքն ի պատրիարքութիւն «Կոստանդինուպօլսոյ»։

Եաղուպ կը կատարէ անոր թախանձանքը, ինչպէս կը կարդանք հետևեալ նամակին մէջն ալ, հրաժարեցնելով միանգամայն Գէորգ վարդապետը նոյն աթոռէն ու զայն կարգելով Պրուսայի առաջնորդ։ Իսկ Երուսաղեմի պատրիարք կը դնէ զԹորոս վարդապետ։

Գերամեծար Գերյարգելի Աբրահոմ մերոյ և. Բարեուսպետի
Ստեփաննոս Վրդպ.ի ի ներս ի տեր

... Մահտեսի Եաղուբ աղան եկն յերուսաղէմայ, և եբեր ընդ իւր զնալօղլու յակոբ վարդապետն. և նստաւ փառաւորապէս նալօղլուն պատրիարք յստամպօլ յաւուր պէնտէկոստէին. և իբր զմեսիայ ընկալաւ զնա ժողովուրդն. և ասի ի հակառակաց անտի, թէ զմիաբանութիւն առնելոց է ընդ հօմայ եկեղեցւոյն, որով և կաթոլիկութեան վէճն բարցնի. և մինչև ցայսօր լաւ է ընդ ուղղափառաց... Ցաւուրս յայսոսիկ եղեն մեծամեծ հրդեհք յստամպօլ. Առաջինն եղև ի յունիսի 18 ի կէտիկ փաշան, և տևեաց ժամս

1. Պատմ. Հայոց. Հար. Գ. էջ 864։